ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 11 2022թ.
№ պնմկ/2-1486

«Էլջեն» ՍՊԸ-ի տնօրենին
(ՀՎՀՀ 01849654)
ք. Երևան, Խորենացու 28
հեռ. 055 91-92-34

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլջեն» ՍՊԸ-ի միջև 27.04.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-10/8-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր մինչև 2022թ. հունիսի 30-ը մատակարարել 1000 հատ Լամպ՝ ինքնալիցքավորվող, սակայն «Էլջեն» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.11.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը վերը նշված ապրանքի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «Էլջեն» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***144 000 ՀՀ դրամ***՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն: Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին ենթակա է գանձման **400 000 ՀՀ** *դրամ*, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին ենթակա է գանձման **600 000 ՀՀ դրամ** որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. նոյեմբերի 10-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am